ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 1621-Ա ՀՐԱՄԱՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 814-Ն որոշման 1-ին կետով սահմանված ծառայողական քննություն անցկացնելու կարգի 45-րդ կետով, հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 10:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմում կայացած էթիկայի հանձնաժողովի նիստի N 2 արձանագրության 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1621-Ա հրամանի հիման վրա իրականացվող ծառայողական քննության անցկացումն ավարտելու վերաբերյալ 08.11.2024թ. կազմված արձանագրությունը, ինչպես նաև հաշվի առնելով ծառայողական քննության շրջանակում պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման ու հավաքված հավաստի տվյալների բավարար ամբողջությունը՝ պարզվեց.

<u>Նախապատմություն.</u>

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1621-Ա հրամանի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և [redacted] նկատմամբ նշանակվել է ծառայողական քննություն (այսուհետ՝ Ծառայողական քննություն), իսկ 2-րդ կետով սահմանվել է, որ Ծառայողական քննության շրջանակում պարզաբանման են ենթակա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] 2024 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ Ն/16/17286-2024 գրությամբ ներկայացված հանգամանքները:

Նույն հրամանի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպչին հանձնարարվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում ձևավորել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով (այսուհետ՝ էթիկայի հանձնաժողով), որին հանձնարարվել է անցկացնել Ծառայողական քննությունը:

Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովը ձևավորվել է հետևյալ կազմով՝ էթիկայի հանձնաժողովի նախագահ Մարիա Տոնոյան (ՀՀ նախագահի աշխատակազմի անձնակազմի կառավարման և պետական պարգևների վարչության կադրերի բաժնի պետ), էթիկայի հանձնաժողովի անդամներ՝ Աստղիկ Մկրտչյան (ՀՀ պետական վերահսկողական ծառայության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ), Շաքե Հովհաննիսյան (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության

գլխավոր մասնագետ), Մանիկ Երիցյան (ՀՀ առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ), Հայկ Հարությունյան (ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետ):

Հարկ է ընդգծել, որ Ծառայողական քննության շրջանակում և սույն եզրակացությամբ կատարված դատողությունները կառուցված են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի, «Հանրային ծառայության մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» թիվ 697-Ն որոշմամբ նախատեսված հանրային ծառայողի վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների շուրջ:

Այսպես, «Հանրային ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարքագծի սկզբունքներն են հանրությանը ծառայելու գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» թիվ 697-Ն որոշմամբ սահմանված քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 17-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական ծառայողը, ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում, բացառությամբ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չներկայացնել, ինչպես նաև չգործադրել հոգեբանական բռնություն:

Կանոնագրքի 24-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս՝ այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս ցանկացած իրավիճակում ցուցաբերել զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն:

Կանոնագրքի 25-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, իսկ այդպիսիք առաջանալու դեպքում՝ պահպանել հանգստություն, բարեկրթություն:

Կանոնագրքի 26-րդ կետի համաձայն՝ գործընկերների հետ հարաբերություններում քաղաքացիական ծառայողը պարտավոր է ցուցաբերել հարգանք և բարեկրթություն՝ թույլ չտալով այնպիսի վարքագիծ, որը վնասում է անհատի արժանապատվությունն ու իրավունքները կամ ստեղծում է այնպիսի իրավիճակ, որը խոչընդոտում է ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետությանը:

Էթիկայի հանձնաժողովի համար Ծառայողական քննության շրջանակում պարզաբանման է ենթակա եղել այն հարցը, թե արդյոք Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և [redacted] գործողություններում առկա են եղել Կանոնագրքով սահմանված հարգալիրության սկզբունքի խախտումներ, թե ոչ:

Այսպես, Ծառայողական քննության շրջանակում պարզաբանման ենթակա հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու նպատակով 2024 թվականի հոկտեմբերի 23-ին ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմում գումարվել է Էթիկայի հանձնաժողովի նիստ, որի ժամանակ արձանագրվել է, որ

ՀՀ առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ Մանիկ Երիցյանը գտնվում է ամենամյա արձակուրդում:

Էթիկայի հանձնաժողովն ի գիտություն է ընդունել ՀՀ առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ Մանիկ Երիցյանի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ վերջինս Էթիկայի հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկում ներառվել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից առաջադրման հիման վրա, մինչդեռ 2024 թվականի հունվարի 19-ից ազատվել է զբաղեցրած պաշտոնից, իսկ ՀՀ առողջապահության նախարարության կողմից, որպես Էթիկայի հանձնաժողովի անդամության թեկնածու, չի առաջադրվել, ուստի չի կարող մասնակցել Ծառայողական քննության ընթացքին: Միաժամանակ հայտնել է, որ կապ է հաստատել ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ, որտեղից հայտնել են, որ չմասնակցության հետ կապված խնդիր չկա, և գրություն ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

2024 թվականի հոկտեմբերի 23-ին ժամը 11:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմում կայացած Էթիկայի հանձնաժողովի նիստի N 1 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Էթիկայի հանձնաժողովը որոշել է պարզել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և [redacted] կողմից հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման փաստի առկայությունը կամ բացակայությունը, վարքագծի կանոնների խախտման համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները, [redacted] և [redacted] մեղավորության առկայության դեպքում՝ դրա հիմնավորումը վարքագծի կանոնների խախտման մեջ, վարքագծի կանոնների խախտման հետևանքները:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 23-ին ժամը 11:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմում կայացած Էթիկայի հանձնաժողովի նիստի N 1 արձանագրության 2-րդ կետը՝ Ծառայողական քննության շրջանակում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և [redacted] առաջարկել է եռօրյա ժամկետում ներկայացնել գրավոր բացատրություն՝ արդյո՞ք Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] 2024 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ Ն/16/17286-2024 գրությամբ ներկայացված միջադեպը տեղի է ունեցել, թե ոչ, իսկ տեղի ունենացած լինելու դեպքում ներկայացնել միջադեպի վերաբերյալ իրենց հայտնի, ինչպես նաև Ծառայողական քննության շրջանակներում ուշադրության արժանի հանգամանքներ, տեղեկություններ և դիրքորոշումներ, իսկ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] առաջարկվել է ներկայացնել իր 2024 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ Ն/16/17286-2024 գրությամբ ներկայացված միջադեպի մասին իր կողմից տեղեկանալու հանգամանքների մասին՝ միաժամանակ ներկայացնելով միջադեպի վերաբերյալ իրեն հայտնի, ինչպես նաև Ծառայողական քննության շրջանակներում ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Ծառայողական քննության շրջանակում 2024 թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 10:00-ին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմում գումարվել է Էթիկայի հանձնաժողովի նիստ, որի ընթացքում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության

ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և [redacted] ինչպես նաև նույն վարչության [redacted] ներկայացրած գրավոր բացատրությունները:

Ներկայացված գրավոր բացատրությունների ուսումնասիրության արդյունքում 2024 թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 10:00-ից սկսած հրավիրվել են բանավոր լսումներ, որոնց հրավիրվել են ոչ միայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և նույն վարչության [redacted] այլ նաև ներկայացված գրավոր բացատրություններում մատնանշված անձինք՝ նույն վարչության [redacted] և [redacted] էլեկտրոնային փոստի միջոցով դիմել է Էթիկայի հանձնաժողովի անդամ Հայկ Հարությունյանին՝ խնդրելով բանավոր լսումների հրավիրել նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ [redacted] կողմից չի ներկայացվել որևէ պատճառաբանված հիմնավորում, թե Ծառայողական քննության շրջանակում ինչ հանգամանքներ պետք է պարզաբանվեն [redacted] և [redacted] կողմից, բացի այդ, ներկայացված գրավոր բացատրություններից ոչ մեկում չի մատնանշվել վերջիններիս անունները, Էթիկայի հանձնաժողովը որոշել է մերժել [redacted] միջնորդությունը:

Ծառայողական քննության շրջանակում ներկայացված գրավոր բացատրությունների և անցկացված բանավոր լսումների ամփոփմամբ Էթիկայի հանձնաժողովը հաստատված է համարում, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և [redacted] միջև տեղի է ունեցել միջադեպ, ընդ որում, միջադեպի փաստական հանգամանքները հաստատված են համարվում Ծառայողական քննության շրջանակում հրավիրված բանավոր լսումների արդյունքում:

2024 թվականի նոյեմբերի 8-ին ժամը 16:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմում Էթիկայի հանձնաժողովի նիստի ժամանակ, հաշվի առնելով, որ միջադեպը կարող է համապատասխանել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության հատկանիշների, և հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 814-Ն որոշմամբ սահմանված ծառայողական քննություն անցկացնելու կարգի 33-րդ կետը՝ Էթիկայի հանձնաժողովի կողմից միաձայն որոշվել է այդ մասին հայտնել իրավապահ մարմիններին:

Նկատի ունենալով, որ Ծառայողական քննության շրջանակում գրավոր և բանավոր բացատրությունների ուսումնասիրությամբ ձեռքբերված փաստական տվյալներն իրենց ամբողջությամբ բավարար են Ծառայողական քննության շրջանակում պարզաբանման ենթակա հանգամանքների կապակցությամբ համապատասխան եզրակացություն ձևավորելու համար, ինչպես նաև այն հանգամանքը, որ խնդրո առարկա դեպքում քրեական գործի քննությամբ պայմանավորված աշխատանքների կատարման անհնարինություն առկա չէ, Էթիկայի հանձնաժողովը որոշել է չկասեցնել Ծառայողական քննությունը:

Միևնույն ժամանակ, Էթիկայի հանձնաժողովը Ծառայողական քննությունը չի կասեցրել նաև այն հանգամանքով պայմանավորված, որ [redacted] կողմից նկարագրած և [redacted] վերագրվող արարքը հանդիսանում է մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործ, իսկ [redacted] կողմից համապատասխան բողոք իրավապահ մարմիններին չի ներկայացվել:

<u>Փաստեր.</u>

Ծառայողական քննության շրջանակում գրավոր և բանավոր բացատրությունների ուսումնասիրությամբ ձեռքբերված տվյալների հիման վրա Էթիկայի հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստերը.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] 2024 թվականի օգոստոսի 8-ին աշխատանքային ժամի ավարտից հետո՝ ժամը 18:05-ի միջակայքում, ներս է մտել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] աշխատասենյակ և պահանջել ներկայացնել բացատրություն, թե ինչու է նույն օրը ժամը 13:03-ին հերթական գործը՝ քաղաքացուն աշխատած ժամանակահատվածի, աշխատավարձի, մարմնի վերանվանման մասին տեղեկանք տրամադրելու մասին, մակագրվել իրեն, և ինչու այդ աշխատանքը՝ որպես առաջին կատարող, պետք է կատարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության կողմից, այլ ոչ թե Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարիներ շարունակ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչությունը նման գործերով հանդիսացել է երկրորդ կատարող:

[redacted] աշխատասենյակից դուրս գալու հորդորին ի պատասխան՝ [redacted] շարունակել է մնալ [redacted] աշխատասենյակում, ինչին հաջորդել են վիրավորական խոսքերը [redacted] հասցեին:

[redacted] կողմից իրեն ուղղված վիրավորանքների հետևանքով, հայտնվելով խիստ նյարդային և հուզական վիճակում, իր գրասեղանի վրա դրված գրասենյակային պիտույքը նետել է [redacted] ուղղությամբ, ինչի արդյունքում, ըստ [redacted] բացատրության, վերջինիս հասցվել է մարմնական վնասվածք ([redacted] կողմից Էթիկայի հանձնաժողովին է ներկայացվել ենթադրյալ միջադեպից հետո իր կողմից կատարված լուսանկարը):

Էթիկայի հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջադեպի արդյունքում [redacted] հասցված մարմնական վնասվածքի մասին չի հայտնվել որևէ մարմնի, այդ թվում իրավապահ, ինչպես նաև որևէ ձև արձանագրված չէ մարմնական վնասվածք ստանալու փաստը, Ծառայողական քննության շրջանակում [redacted] հասցված մարմնական վնասվածք ստանալու փաստը քննարկման առարկա չի դարձրել և հաստատված չի համարել, որ [redacted] մարմնական վնասվածքը հասցվել է հենց խնդրո առարկա միջադեպի արդյունքում:

Հրավիրված բանավոր լսումների ժամանակ [redacted] և [redacted] միջև իրականացվել է նաև առերես հարցաքննություն, որի ժամանակ պարզ է դարձել, որ

մինչ այս միջադեպը [redacted] և [redacted] միջև եղել են աշխատանքային բնույթի այլ տարաձայնություններ ևս, մասնավորապես, միջադեպից որոշ ժամանակ առաջ [redacted] կողմից մակագրվել է այլ աշխատանք, որը [redacted] կողմից չի կատարվել, ինչի արդյունքում [redacted] Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով գործերը մակագրելիս իրականացրել է աշխատանքը կատարելու վերաբերյալ գրառումներ:

Իրականացված առերես հարցաքննության ժամանակ [redacted] իր բացատրությամբ ընդունել է այն հանգամանքը, որ վերջինս [redacted] որակել է որպես «ճղճիմ» անձավորություն այն արարքի համար, որ [redacted] լինելով վարչության [redacted] կատարող, Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով գործերը մակագրելիս իրականացրել է աշխատանքը կատարելու վերաբերյալ գրառումներ:

Ըստ [redacted] բացատրության՝ բացի «ճղճիմ» անձավորություն որակելուց, [redacted] վերջինիս անվանել է նաև «տականք», ինչն էլ, ըստ էության, պատճառ է հանդիսացել միջադեպի օրը [redacted] հունից դուրս գալու և գրասենյակային պիտույքը [redacted] ուղղությամբ նետելու համար:

Հարկ է նշել, որ [redacted] չի ընդունում այն փաստը, որ վերջինս [redacted] անվանել է նաև «տականք»:

Հրավիրված բանավոր լսումների ժամանակ, ըստ [redacted] հարցաքննության, վերջինս լսել է միայն բարձրաձայն ձայներ, սակայն հստակ խոսք կամ վիրավորական բառեր չի լսել, իսկ ըստ [redacted] հարցաքննության՝ վերջինս [redacted] բնութագրել է որպես կոնֆլիկտային անձնավորություն:

<u>Վերլուծություն.</u>

Էթիկայի հանձնաժողովը, Ծառայողական քննության շրջանակում ներկայացված գրավոր բացատրությունների և անցկացված բանավոր լսումների ամփոփմամբ, ուսումնասիրված փաստական հանգամանքների և կիրառելի իրավակարգավորումների համադրմամբ, արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և [redacted] արարքներում առկա է հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման փաստ.

[redacted] արարքում հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման փաստը դրսևորվում է նրանում, որ վերջինս [redacted] որակել է որպես «ճղճիմ» անձավորություն, որը Հրաչյա Աճառյանի Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում բնութագրվում է՝ որպես փոքրասիրտ, փոքրահոգի, թշվառ, ինչն այս իրավիճակում օգտագործվել է ակնհայտ վիրավորական իմաստով, որպիսի արարքը չի համապատասխանում Կանոնագրքով սահմանված հարգալիրության սկզբունքի պահանջներին:

Բացի այդ, [redacted] պարբերաբար քննարկման առարկա է դարձրել [redacted] որպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] կողմից տրված հանձնարարականների կատարման հանգամանքը, ինչը, ըստ էության, ընկած է այս միջադեպի հիմքում: Ըստ էության, [redacted] կողմից ժամանակ առ ժամանակ ստեղծվել է այնպիսի

իրավիճակ, որը խոչընդոտել է ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետությանը:

[redacted] արարքում հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման փաստը դրսևորվում է նրանում, որ վերջինս միջադեպից անմիջապես հետո չի փորձել իրավիճակը հանգուցալուծել Կանոնագրքով սահմանված հարգալիրության սկզբունքի շրջանակներում, այդ իրավիճակում չի ցուցաբերել զսպվածություն և հավասարակշռվածություն, ավելին՝ [redacted] հետ խոսել է ձայնը բարձրացնելով և վերջինիս ուղղությամբ գրասենյակային պիտույքը նետելով:

[redacted] ըստ բանավոր լսումների ժամանակ ներկայացած անձանց հարցաքննության, բնութագրվում է որպես կոնֆլիկտային անձնավորություն, իսկ նույն անձանց կողմից [redacted] մասնագիտական և մարդկային հատկանիշների վերաբերյալ բողոքներ Ծառայողական քննության շրջանակում չեն ներկայացվել, ինչում դերակատարում է ունեցել նաև [redacted] նախկին կատարած աշխատանքի և գործընկերների հետ ունեցած հարաբերությունների հանգամանքը:

[redacted] և [redacted] արարքներում հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման հետևանքը դրսևորվում է նրանում, որ և՛ [redacted] և՛ [redacted] արարքների արդյունքում հեղինակազրկվել է հանրային ծառայությունում Կանոնագրքով նախատեսված հանրային ծառայողի վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների վերաբերյալ գիտակցությունը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այս միջադեպի վերաբերյալ տեղեկատվությունը լայն արձագանք է ստացել ՀՀ ֆինանսների նախարարությունում:

Էթիկայի հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ թեպետ [redacted] արարքն առանձին վերցրած ավելի վտանգավոր ու ավելի ծանր խախտում է համարվում, այդուհանդերձ [redacted] նկատմամբ կարգապահական պատասխանատվության հարց լուծելիս առաջարկում է հաշվի առնել [redacted] նախկին կատարած աշխատանքի, գործընկերների հետ ունեցած և՛ մասնագիտական, և՛ մարդկային շփումների հանգամանքը:

Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները և առանձնահատկությունները սահմանված են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, որի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու և (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու և (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու և (կամ) քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանված կարգով կիրառվում են նույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական տույժերը դասակարգվում են երկու տեսակի՝ թեթև և խիստ.

1) թեթև կարգապահական տույժերն են՝

ա. նախազգուշացում,

բ. նկատողություն.

2) խիստ կարգապահական տույժերն են՝

ա. խիստ նկատողություն,

բ. հիմնական աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը,

գ. ծառայության դադարեցում:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգապահական տույժ նշանակելիս հաշվի են առնվում խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որի պարագայում կատարվել է խախտումը, խախտման հետևանքները, նախկինում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և (կամ) խախտումներ կատարած լինելու հանգամանքները:

Ամբողջ վերոգրյալի ամփոփմամբ՝ էթիկայի հանձնաժողովը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության [redacted] վարչության [redacted] և [redacted] նկատմամբ կարգապահական պատասխանատվության հարց լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուրի կողմից հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման բնույթն ու բովանդակությունը, վարքագծի կանոնների խախտման համար հիմք հանդիսացած պատճառներն ու հանգամանքները և խախտման հետևանքները, վարքագծի կանոնների խախտման մեջ յուրաքանչյուրի մեղավորության աստիճանը, նախկինում նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և խախտումներ կատարած լինելու հանգամանքները:

Սույն եզրակացությունը կազմվել է 14.11.2024 թվականին՝ 8 (ութ) թերթից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԱՐԻԱ ՏՈՆՈՅԱՆ

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԱՍՏՂԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՇԱՔԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ